Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
նոյեմբերի 15-ի N որոշման

# ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՏԵՍՔՈՎ ՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## I. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն մեթոդաբանությամբ կարգավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծրագրային վճարի հաշվարկման մեթոդաբանության հետ կապված հարաբերությունները:

## II. ՍՈՒՅՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն մեթոդաբանությունում կիրառվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

**1) յուրաքանչյուր տարիքում ծրագրային վճարի ստացման ժամանակահատված՝** մահացության աղյուսակներով սահմանված կենսաթոշակային տարիքից հետո կյանքի սպասվող միջին տևողությունը յուրաքանչյուր տարիքում.

**2) մահացության աղյուսակներ՝** Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հաշվարկված և հրապարակված՝ երկու սեռի համար միավորված մահացության աղյուսակներ.

**3) կենսաթոշակի ընտրության դիմում՝** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կենսաթոշակի ընտրության դիմում։

3. Սույն մեթոդաբանությունում կիրառված մյուս հասկացությունները կիրառվում են համապատասխանաբար «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող այդ հասկացությունների իմաստներով։

## II. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

4. Կենսաթոշակի ընտրության դիմումը ներկայացնելու պահին մասնակցի տարիքին համապատասխան ծրագրային վճարների ստացման նվազագույն ժամանակահատվածը սահմանվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված մահացության աղյուսակների։

5. Եթե մասնակիցն իր կուտակային կենսաթոշակի մի մասը ծրագրային վճարի տեսքով ստանալու ընտրություն է կատարել՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետին համապատասխան, ապա սույն մեթոդաբանության 4-րդ կետին համապատասխան ծրագրային վճարների ստացման նվազագույն ժամանակահատվածը սահմանվում է՝ ըստ ստորև ներկայացվող սանդղակի.

| Տարիքը | Ժամանակահատվածը (տարի) |
|---|---|
| 63-67 | Տվյալ միջակայքի վերին տարիքի համար հրապարակված ժամանակահատված՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված մահացության աղյուսակների |
| 68-72 | |
| 73-77 | |
| 78 և բարձր | |

6. Ծրագրային վճարների ստացման ժամանակահատվածը յուրաքանչյուր մասնակցի համար որոշվում է մեկ անգամ՝ մասնակիցների ռեեստրը վարողին կենսաթոշակի ընտրության դիմում ներկայացնելուց հետո, որից հետո՝ հետագա յուրաքանչյուր ամսվա մարվող վճարների թվի հաշվարկման ժամանակ, սույն

մեթոդաբանության 7-րդ և 8-րդ կետերով սահմանված բանաձևում այդ որոշված մեծությունից նվազեցվում է մեկական ամիս:

7. Եթե մասնակիցը ցանկանում է, որ իր համար ծրագրային վճարը հաշվարկվի նույն մեթոդաբանությամբ սահմանված ծրագրային վճարի ստացման նվազագույնից ավելի երկար ժամանակահատվածի համար, ապա կենսաթոշակի ընտրության դիմումում նշվում է ավելի երկար ժամանակահատված:

## IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՍՏԱՑՈՒՄԸ

8. Մասնակիցների ռեեստրը վարող անձը օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում ծրագրային եղանակով կենսաթոշակ ստացող յուրաքանչյուր մասնակցի համար ամսական պարբերականությամբ հաշվարկում է ծրագրային վճարի չափը, ինչպես նաև մարման ենթակա փայերի թիվը, որի հիման վրա կազմակերպում է յուրաքանչյուր անգամ վճարման համար անհրաժեշտ փայերի մարումը և մասնակցին ծրագրային վճարի կատարումը:

9. Ծրագրային վճարի կատարման ամբողջ ընթացքում չմարված փայերի մասով մասնակիցը պահպանում է իր՝ որպես կենսաթոշակային ֆոնդի մասնակցի՝ օրենքով վերապահված իրավունքները:

10. Ծրագրային վճարի հաշվարկման և կատարման համար հիմք են ընդունվում մասնակցին պատկանող բոլոր կենսաթոշակային ֆոնդերի բոլոր փայերը՝ բացառությամբ այն փայերի, որոնց մարումը տվյալ պահին օրենքով սահմանված կարգով կասեցված է:

11. Ծրագրային վճար կատարելու համար սույն ընթացակարգով որոշված անհրաժեշտ թվով փայերը մարվում են փայերի՝ ծրագրային վճարի կատարման ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ փայի վերջին հայտնի հաշվարկային արժեքով:

12. Ծրագրային վճարի կատարման համար անհրաժեշտ մարվող փայերի թիվը որոշելու համար հաշվարկումը պետք է կատարվի ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը՝ յուրաքանչյուր անգամ փայերի մարումից առաջ:

13. Ծրագրային վճարը յուրաքանչյուր ամսվա համար կատարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը ներառյալ:

4. Սույն ընթացակարգով փայերի մարումից առաջացած համապատասխան գումարը փոխանցվում է մասնակցի բանկային հաշվին:

5. Ծրագրային վճարը կատարվում է կենսաթոշակի ընտրության դիմումը մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից սկսած:

6. Ծրագրային վճարի կատարումը դադարում է՝

1) մասնակցի՝ կենսաթոշակային հաշվում առկա բոլոր փայերի մարումից և համապատասխան վճարումն ավարտվելուց հետո.

2) մասնակցի մահվան դեպքում:

## V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Ամսական ծրագրային վճարի կատարման համար անհրաժեշտ մարվող փայերի թիվը հաշվարկվում է՝ ըստ հետևյալ բանաձևի՝

$$\text{ՓՔi} = \text{ՓԸՔi} / \text{ԾՎԺ},$$

որտեղ՝

**Փքi**-ն i-րդ ֆոնդի մարվող փայերի թիվն է,

**ՓԸՔi**-ն i-րդ ֆոնդում շահառուի ունեցած փայերի ընդհանուր թիվն է՝ տվյալ ամսվա վերջի դրությամբ,

**ԾՎԺ**-ն սույն մեթոդաբանության 4-րդ կամ 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածն է (արտահայտված ամիսներով)՝ մինչև ծրագրային վճարի ստացման ժամանակահատվածի վերջը:

Բոլոր ֆոնդերի համար բանաձևը կլինի հետևյալը՝

$$\sum_{i=1}^{n} \text{ՓՔ}_i = \sum_{i=1}^{n} \text{ՓԸՔ}_i / \text{ԾՎԺ}:$$

8. Եթե սույն մեթոդաբանության 7-րդ կետի համաձայն հաշվարկված փայերի ընդհանուր արժեքը փոքր է, քան պահանջվող նվազագույն արժեքը՝

$$\sum_{i=1}^{n} (\text{ՓՔ}_i \times \text{ՓՀԱ}_i) < \text{ՀԿ} \times 1/4,$$

որտեղ՝

**ՓՀԱ**$_i$-ն i-րդ ֆոնդի փայի հաշվարկային արժեքն է՝ ըստ սույն մեթոդաբանության 1-ին կետի,

**ՀԿ**-ն վճարման պահին «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական կենսաթոշակային ապահովության բաղադրիչից վճարվող հիմնական կենսաթոշակն է,

ապա բոլոր ֆոնդերից վճարվող փայերի թիվը համամասնորեն ավելացվում է այնքան, մինչև ընդհանուր գումարը լինի ՀԿx¼՝

$$\text{ՓՔ}_{ik} = \text{ՓԸՔ}_i \,/\, \text{ԾՎԺ} \times k,$$

որտեղ՝

$$k = (\text{ՀԿ} \times 1/4) / \sum_{i=1}^{n} (\text{ՓՔ}_i \times \text{ՓՀԱ}_i)$$

Բոլոր ֆոնդերի համար բանաձևը կլինի հետևյալը՝

$$\sum_{i=1}^{n} \text{ՓՔ}_{ik} = \sum_{i=1}^{n} \text{ՓԸՔ}_i \,/\, \text{ԾՎԺ} \times k,$$

որտեղ՝

**ՓՔ**$_{ik}$-ն i-րդ ֆոնդից վճարվող փայերի թիվն է, եթե $\sum_{i=1}^{n} (\text{ՓՔ}_i \times \text{ՓՀԱ}_i) < \text{ՀԿ} \times 1/4$:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ